

Բաժնետիրական ընկերությունների կանոնադրական կապիտալի հաշվառումը

Կազմակերպության կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալը ձևավորվում է հիմնադիրների (մասնակիցների) կողմից կազմակերպությունում կատարված ներդրումներից (բաժնետոմսերի, բաժնեմասերի, փայերի տեսքով), որն գրանցված է հիմնադիր փաստաթղթերում և հավասար է կազմակերպության կողմից թողարկված բոլոր տեսակի բաժնետոմսերի (բաժնեմասերի, փայերի) անվանական արժեքների գումարին: Այն սահմանում է պարտատերերի շահերն երաշխավորող կազմակերպության գույքի նվազագույն չափը:

Առևտրային կազմակերպությունների որոշ տեսակների համար (սահմանափակ պատասխանատվության ընկերություն, լրացուցիչ պատասխանատվության ընկերություն, բաժնետիրական ընկերություն) այն անվանվում է կանոնադրական, իսկ որոշ տեսակների համար էլ (լիակատար ընկերակցություն, վստահության վրա հիմնված ընկերակցություն)՝ բաժնեհավաք կապիտալ:

Բաժնետիրական ընկերությունների կանոնադրական կապիտալի ձևավորումն իրականացվում է ՀՀ Քաղաքացիական օրենսգրքով, «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքով և ընկերության հիմնադիր փաստաթղթերով սահմանված կարգով և նվազագույն չափը չպետք է պակաս լինի բաց ընկերությունների համար՝ ընկերության պետական գրանցման պահին գործող նվազագույն աշխատավարձի հազարապատիկ չափից, փակ ընկերությունների համար՝ նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկ չափից:

Կանոնադրական կապիտալի հաշվառումը վարվում է 311 «Կանոնադրական (բաժնեհավաք)» առաջին կարգի հաշվով, ընդ որում հաշվում գրանցումներ կատարվում են միայն հիմնադիր փաստաթղթերը կամ դրանցում հետագայում կատարված փոփոխությունները սահմանված կարգով գրանցելուց հետո:

Համաձայն ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի՝ բաժնետերերը պարտավոր են մինչև ընկերության գրանցումն ամբողջությամբ վճարել կանոնադրական կապիտալը:

Այդ դեպքում տրվում են հետևյալ հաշվապահական ձևակերպումները՝

- ԴԲ 111 «Շահագործման մեջ գտնվող հիմնական միջոցներ»**
- 113 «Շահագործման մեջ չգտնվող հիմնական միջոցներ»**
- 115 «Հողամասեր»**
- 211 «Նյութեր»**
- 251 «Դրամարկղ»**
- 252 «Հաշվարկային հաշիվ»**

և այլն,

ԿՐ 311 «Կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալ»

Ընկերության բաժնետերերի՝ կանոնադրական կապիտալում ներդրումների գծով ընդհանրացված և վերլուծական հաշվառում վարելու նպատակով կանոնադրական կապիտալի ձևավորման ժամանակ կարող են օգտագործել նաև 312 «Չվճարված կապիտալ» առաջին կարգի հաշիվը: Այդ դեպքում տրվում են հետևյալ հաշվապահական ձևակերպումները՝

ԴԲ 312 «Չվճարված կապիտալ»

ԿՐ 311 «Կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալ»

և

- ԴԲ 111 «Շահագործման մեջ գտնվող հիմնական միջոցներ»**
- 113 «Շահագործման մեջ չգտնվող հիմնական միջոցներ»**
- 115 «Հողամասեր»**
- 211 «Նյութեր»**
- 251 «Դրամարկղ»**
- 252 «Հաշվարկային հաշիվ»**

և այլն

ԿՐ 312 «Չվճարված կապիտալ»

312 «Չվճարված կապիտալ» առաջին կարգի հաշվին կից ընկերությունները կարող են բացել երկրորդ կարգի հաշիվներ՝ 3121 «Տեղաբաշխված, բայց չվճարված կապիտալ» և 3122 «Թողարկված, բայց չտեղաբաշխված կապիտալ», որոնցից առաջինում հաշվառելու են արդեն բաժանորդագրված բաժնետոմսերի գծով արդեն կոնկրետ բաժնետերերի չվճարված (չմարված) գումարը, իսկ երկրորդի գծով՝ թողարկված, բայց դեռևս չտեղաբաշխված (չբաժանորդագրված), այսինքն կոնկրետ բաժնետեր չգտած բաժնետոմսերի անվանական արժեքի գումարը:

Ընկերություններն իրավունք ունեն ընդհանուր ժողովի որոշմամբ բաժնետոմսերի անվանական արժեքը ավելացնելու կամ լրացուցիչ բաժնետոմսեր թողարկելու (եթե նախկինում տեղաբաշխված բաժնետոմսերը լրիվ իրացված և վճարված են) միջոցով մեծացնել կանոնադրական կապիտալը:

Երբ մեծացումը կատարվում է լրացուցիչ բաժնետոմսեր թողարկելու միջոցով, ապա տրվում են վերևում նշված ձևակերպումները, իսկ եթե անվանական արժեքի մեծացմամբ, ապա՝

ԴԲ 314 «Լրացուցիչ կապիտալ»

342 «Նախորդ տարիների չբաշխված շահույթ (չծածկված վնաս)»

351 «Պարտադիր ձևավորվող պահուստներ»

ԿՐ 311 «Կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալ»

Համաձայն գործող օրենսդրության՝ եթե ընկերության գոյության երկրորդ ֆինանսական տարվա ավարտից սկսած ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի հաստատմանը ներկայացված ընկերության տարեկան հաշվապահական հաշվեկշռից կամ աուդիտորական ստուգման արդյունքներից պարզվի, որ ընկերության զուտ ակտիվների, որն իրենից ներկայացնում է որպես սեփական կապիտալի և հետաձգված եկամուտների հանրագումար, արժեքն փոքր է կանոնադրական կապիտալից, ապա պետք է կատարվի վերջինիս նվազեցում մինչև զուտ ակտիվների մակարդակը՝ բաժնետոմսերի անվանական արժեքը նվազեցնելու միջոցով: Այս դեպքում տրվում են հետևյալ հաշվապահական ձևակերպումները՝

ԴԲ 311 «Կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալ»

ԿՐ 314 «Լրացուցիչ կապիտալ»

342 «Նախորդ տարիների չբաշխված շահույթ (շծածկված վնաս)»

Եթե այդ նվազեցման արդյունքում ընկերության կանոնադրական կապիտալը փոքր է լինում օրենքով սահմանված նվազագույն չափից, ապա ընկերությունը պարտավոր է որոշում ընդունել իր լուծարման մասին:

Թողարկված, բայց չտեղաբաշխված բաժնետոմսերի հաշվին կանոնադրական կապիտալի նվազեցման, այսինքն այդ բաժնետոմսերի շրջանառությունից հանման (մարման) դեպքում տրվում է հետևյալ հաշվապահական ձևակերպումը՝

ԴԲ 311 «Կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալ»

ԿՐ 312 «Չվճարված կապիտալ»

«Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքով սահմանված դեպքերում ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի սեփականատերերն իրավունք ունեն ընկերությունից պահանջել իրենց պատկանող բաժնետոմսերի կամ դրանց մի մասի հետգնումը, ընդ որում գույքի շուկայական արժեքը սահմանվում է անկախ գնահատողի (աուդիտորի) կողմից: Բաժնետոմսերի հետգնման ուղղվող միջոցների գումարը չի կարող գերազանցել ընկերության զուտ ակտիվների արժեքի 10 տոկոսը: Եթե բաժնետերերի պահանջով հետգնման ենթակա բաժնետոմսերի գումարային արժեքը գերազանցում է այն գումարը, որն ընկերությունը կարող է տրամադրել բաժնետոմսերի հետ գնման համար, բաժնետոմսերը հետ են գնվում բաժնետերերի դիմումներում նշված բաժնետոմսերի քանակներին համամասնաբար:

Հետ գնման դեպքում բաժնետոմսերի հետ գնման գնի, հետագայում դրանց վաճառքի գնի, ինչպես նաև հետ գնված բաժնետոմսերի անվանական արժեքով մարման (շրջանառությունից հանման) հաշվապահական ձևակերպումների ավելի պատկերավոր ներկայացնելու համար բերենք թվային օրինակ.

Օրինակ. Ընկերությունն օրենքի պահանջով հետ է գնել բաժնետոմս, որի անվանական արժեքն է 10 հազար դրամ, իսկ անկախ գնահատողի (աուդիտորի) կողմից սահմանված հետ գնման գինը՝ 13 հազար դրամ: Այդ դեպքում տրվում է հետևյալ հաշվապահական ձևակերպումը՝

ԴԲ	313 «Հետ գնված կապիտալ»	13000 դրամ
ԿՐ	251 «Դրամարկղ» և այլն	13000 դրամ

ընդ որում 313 «Հետ գնված կապիտալ» առաջին կարգի հաշվում հաշվառումը վարվում է միայն հետ գնման գնով:

Ընկերությունը կարող է հետ գնված բաժնետոմսը կամ վաճառել, կամ էլ շրջանառությունից հանել (մարել):

Ա) Ընկերությունը հետ գնված բաժնետոմսը վաճառում է 16 հազար դրամով: Այդ դեպքում՝

ԴԲ	251 «Դրամարկղ» և այլն	16000 դրամ
ԿՐ	313 «Հետ գնված կապիտալ»	13000 դրամ
	314 «Լրացուցիչ կապիտալ»	3000 դրամ

Եթե կազմակերպությունը վաճառում է հետ գնման գնից ցածր՝ օրինակ 11 հազար դրամով, ապա՝

ԴԲ	251 «Դրամարկղ» և այլն	11000 դրամ
	314 «Լրացուցիչ կապիտալ»	2000 դրամ
ԿՐ	313 «Հետ գնված կապիտալ»	13000 դրամ

Բ) Ընկերությունը հետ գնված բաժնետոմսը հանում է շրջանառությունից (մարում է): Այդ դեպքում՝

ԴԲ	311 «Կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալ»	10000 դրամ
	314 «Լրացուցիչ կապիտալ»	3000 դրամ
ԿՐ	313 «Հետ գնված կապիտալ»	13000 դրամ

Ընկերության լուծարման դեպքում մնացորդային գույքը բաժանվում է բաժնետերերի միջև: Այդ դեպքում տրվում են հետևյալ հաշվապահական ձևակերպումները և որից հետո կազմվում գրոյական հաշվեկշիռ:

- ԴԲ 311 «Կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալ»**
- 314 «Լրացուցիչ կապիտալ»**
- 342 «Չբաշխված շահույթ (չծածկված վնաս)»**
- 351 «Պարտադիր ձևավորվող պահուստներ»**
- ԿՐ 529 «Կարճաժամկետ կրեդիտորական պարտք հիմնադիրներին (մասնակիցներին)»**

Թաթուլ Մովսիսյան
«Էկոնոմիկա և իրավունք» 3.2000